ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐՏԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Հայրապետյան Լուսինե
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: Ընտանիքի հետ տարվող աշխատանքներում սոցիալական մանկավարժի մասնագիտական տեխնոլոգիաներին զուգահեռ արվեստաբուժության ընձեռած հանրավորություններից օգտվելը թույլ է տալիս կազմակերպել ախտորոշման, այնուհետև՝ շտկման գործընթացները: Դրանք օգնում են ախտորոշել առկա խնդրի պատճառականությունը՝ տալով դրանց համապատասխան լուծումներ:

Բանալի բառեր: *Ընտանեկան արվեստաբուժություն, մանկավարժական ախտորոշում, արտտեխնոլոգիա, հոգեբանամանկավարժական աշխատանք, սոցիալ-հոգեբանական աջակցություն:*

Հիմնախնդիրը: Ընտանիքի հետ տարվող աշխատանքների բազմաձևությունն ընտանիքում առկա սոցիալ-հոգեբանական, հոգեբանամանկավարժական հիմնախնդրի լուծման տեսանկյունից կարևոր է, և դրանք արդյունավետ կլինեն, եթե սոցիալական մանկավարժը կարողանա ոչ միայն երեխային, այլև նրա ընտանիքի անդամներին մասնակից դարձնել ընտանիքի յուրաքանչյուր անդամին վերաբերող ցանկացած խնդրի լուծման կառուցողական գործընթացներին: Արդյունքում նրանցից յուրաքանչյուրը կկարողանա արժեքային վերաձևակերպումներ տալ խնդրին, դրական լուծման դաշտ բերել այն և գիտակցել, որ ընտանիքում ծագած յուրաքանչյուր խնդրի համար պատասխանատու է հասարակության այս «փոքրիկ բջջի» յուրաքանչյուր անդամ:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Ընտանեկան արտթերապևտիկ տեխնոլոգիաների համակողմանի ուսումնասիրություններին վերաբերող աշխատություններ ունեն ամերիկացի նշանավոր արտթերապևտներ Հաննա Կվյատկովսկան, Ջուդիթ Ռուբինը, Հելեն Լանդգարթենը, որոնք իրենց պրակտիկ հետազոտությունների փորձի հիման վրա արժեքավոր տեխնոլոգիաներ

են մշակել կիրառական մանկավարժությամբ և հոգեբանությամբ զբաղվողների համար:

Հոդվածի նպատակը: Վերլուծել և ներկայացնել ժամանակակից արվեստաբուժության միտումները, ինչպես նաև բացահայտել ընտանեկան հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից արտտեխնոլոգիաների կիրառության առանձնահատկությունները:

Հետազոտության նորույթը: Ընտանեկան արվեստաբուժության տեխնոլոգիաները առաջին անգամ են դիտարկվում սոցիալական մանկավարժի աշխատանքում՝ որպես արդյունավետ որոշումներ կայացնելու, աշխատանքային կրեատիվ ոճի ձևավորման այլընտրանքներ:

Հիմնական նյութի շարադրանքը: Ընտանեկան արտթերապիայի մեթոդների առանձին դիտարկումը, դրանց ազդեցության բազմակողմանի ուսումնասիրությունները կարող են յուրահատուկ դեր և նշանակություն ունենալ ընտանիքի հետ տարվող սոցիալ-մանկավարժական, մանկավարժահոգեբանական խնդիրների լուծման տեսանկյունից: Դրանց առանձնահատկությունները կարող են ստանալ առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ բնույթի ուղղվածություն՝ կախված նրանից, թե ինչպիսի խնդիրների լուծման համար են առանձնացվել, որ տեսանկյունից են կարևորվել: Քանի որ «սոցիալական մանկավարժի հիմնական նպատակներն են ընտանիքի և նրա անդամների պաշտպանությունը (հատկապես երեխայի պաշտպանությունը), ընտանիքի ներուժի բացահայտումն ու օգտագործումը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների կարգավորումն ու վերականգնումը, արդյունավետ փոխգործակցությունների ապահովումը» [1, 230], ապա սոցիալական մանկավարժի գործունեության ուղղվածությունը դասակարգվում է դեպի նպատակը տանող իր գործառույթներով՝ հետազոտական, սոցիալ-մանկավարժական օգնության և աջակցության, հոգեբանամանկավարժական ուղղման և շտկման, հարմարման, վերականգնման, կանխարգելման և այլն, որոնց համապատասխան կան մեթոդներ և տեխնոլոգիաներ: Ընտանիքը բարդ սոցիալական ինստիտուտ է, որում մեծացող երեխան անմիջականորեն իր վրա է կրում ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի, բարոյահոգեբանական կլիմայի, միջանձնային հարաբերությունների ազդեցությունները: Տարբեր պատճառներով երեխան և իր ընտանիքը կարող են ունենալ սոցիալ-հոգեբանական աջակցության, խորհրդատվության կարիք, որոնց զուգահեռ ցանկալի է ընտրել նաև այլընտրանքային միջոցներ, որոնք կապահովեն աշխատանքի դրական արդյունքը: Սոցիալական մանկավարժի կողմից ընտանեկան արտտեխնոլո-

գիաների կիրառման դեպքում երեխայի ակտիվ սոցիալականացման, դրան խոչընդոտող պատճառների, պայմանների վերացման տեսանկյունից դրանք շատ հետաքրքիր գործիքներ կարող են լինել երեխայի և իր ընտանիքի միջև ծագած խնդիրների լուծման համար: Ընտանեկան արտտեխնոլոգիաներն արվեստաբուժության նոր հնարավորությունների բացահատումներն են: Արվեստաբուժությունը բարդ հոգեկան գործընթացների ամբողջություն է, որը ներառում է ճանաչողական ակտիվության բազմակողմանի զարգացում, անձի հուզական, զգացմունքային ապրումների դինամիկայի ուսումնասիրություն, խթանում և այլն: Որպես համակցված գործընթացների արդյունք՝ արվեստաբուժության մեջ կան բժշկության, արվեստի, բժշկական հոգեբանության, մանկավարժական հոգեբանության, էթնոմանկավարժության, բուժական մանկավարժության, շտկողական մանկավարժության և այլ գիտաճյուղերի տարրեր [3, 29]: Արտթերապևտիկ տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մուտք գործելու մարդու ներաշխարհ, դուրս բերելու խորքային խնդիրը, խթանելու ենթագիտակցությունը, վեր հանելու անհաջող փորձից առաջացած վախերը, տարատեսակ ապրումներ ծնող հույզերը և նպաստելու դրանց նորովի մշակմանը՝ ապահովելով փոփոխությունների հանդեպ դիմադրելու կամ լարվելու զգացողությունը պաշտպանվածության և ապահովության զգացողությամբ: Դրանցում հատկապես կարևոր են մանկավարժահոգեբանական, հոգեշտկողական աշխատանքները, որոնք արտահայտվում են մարդու վարքում [4, 33]: Արդյունքում հոգեշտկողական աշխատանքների թիրախն անձն է, իսկ նպատակը՝ նրա հայացքների և պատկերացումների ձևավորած համակարգում փոփոխություններ կատարելը: Արտթերապևտիկ տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս անցավ մուտք գործելու դեպի ենթագիտակցություն, վեր հանելու անհանգստացնող ապրումները, վերամշակելու դրանք՝ ապահովելով լրացուցիչ պաշտպանվածություն և նվազեցնելով փոփոխությունների դիմադրությունը: Ընտանիքի հետ տարվող աշխատանքներում յուրաքանչյուր անդամի ներգրավվածությունն արտթերապևտիկ գործունեության մեջ կարևոր է՝ խնդիրներ վեր հանելու, դրանք շտկելու, կարգավորելու տեսանկյունից: Ընտանեկան արտթերապևտիկ տեխնոլոգիաները արտթերապիայի ավանդական տեխնոլոգիաների նման կարելի է կիրառել անհատական կամ խմբային տարբերակներով [5, 87]: Հատկապես երիտասարդ ընտանիքների դեպքում, երբ կա փորձի պակաս և ծնողավարության ուղղորդվածության բացակայություն, շատ կարևոր է համագործակցային, փոխօգնության առկայությունն ընտանեկան խնդիրներ լուծելու համար: Դրանք հնարավորություն են տալիս վերջնարդյուն-

քում առավել համակողմանի և ամբողջական վեր հանելու ընտանիքում առկա հիմնախնդրի պատճառականությունը, հնարավորինս շտկելու կամ վերացնելու դրանց առաջացման պատճառները, հիմնական խնդիրը լուծելու հետ մեկտեղ բացահայտելու նաև ենթախնդիրներ, որոնց ազդեցությունը թվում է չնչին, բայց խորքային ախտորոշում իրականացնելու դեպքում հստակորեն երևում է, որ հիմնախնդրի բարդությունը բոլորի աչքից հեռու մնացած այդ «չնչին» թվացող երևույթների մեջ էր:

Դիտարկենք ընտանեկան արտթերապևտիկ մի քանի տեխնոլոգիաներ:

Ընտանեկան արտթերապիայի հիմնադիրը Հաննա Կվյատկովսկան է: Վերջինս արվեստաբուժի կարիերան սկսել է ԱՄՆ հոգեկան առողջության ազգային ինստիտուտում աշխատանքի անցնելուց հետո: Նա գտնում է, որ ընտանեկան արտթերապիան՝ որպես ընտանիքի վրա բուժական-ուղղիչ ազդեցության հիմնական մեթոդ, պետք է կիրառել ընտանիքի բոլոր անդամների մասնակցությամբ, խմբային, անհատական պարապմունքներով, նորարարական պատկերային տեխնիկայի համադրմամբ: Այն պահանջում է ընտանիքի հոգեթերապևտիկ վերապատրաստում նախքան բուն արտթերապիային անցնելը [2, 29]:

Հ. Կվյատկովսկան իր աշխատանքում ընտանիքում առկա խնդրի ախտորոշման համար կիրառում էր մեթոդներ, որոնց համար պետք էին գալիս այնպիսի պարագաներ, ինչպիսիք են՝ թուղթը, յուղամատիտները, գունավոր մատիտների հավաքածուները և այլն: Առաջին փուլում ընտանիքի հետ տարվող աշխատանքերի բացատրական մասն էր, որտեղ նրանք պետք է կարևորեն այն, ինչ անելու են արտթերապիայի ընթացքում: Բացատրական աշխատանքներից հետո ընտանիքի անդամները պետք է ստեղծեին ազատ թեմայով երկու նկար և ևս չորսը՝ ըստ տրված հրահանգների: Բոլոր վեց նկարները նախատեսվում էր նկարել մեկ դասի ընթացքում: Յուրաքանչյուր նկարի ստեղծումից հետո ընտանիքի անդամներին առաջարկվում էր արտահայտել իրենց տպավորությունները՝ կապված միմյանց նկարների ընկալման հետ: Նկարներում պետք է ապահովված լինի.

1. կամայական գաղափարի արտացոլում նկարում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի կողմից:

2. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է նկարագրի իր ընտանիքը, բոլոր անդամներին ներառյալ, այդ թվում՝ ինքն իրեն: Ընտանիքի անդամների ֆիգուրները պետք է պատկերված լինեն հնարավորինս ամբողջական:

3. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է պատկերի իր ընտանիքի վերացական դիմանկարը:

4. Ընտանիքի անդամներին նախ առաջարկվում է կամայական գծեր քաշել թղթի վրա, իսկ հետո դրանց մեջ պատկերներ տեսնել և նկարել պատկերների ուրվագծերը: Նկարողը կարող է թերթիկը պտտել գրիչի առանցքի շուրջ, խզբզոցներին ավելացնել նոր պատկերային տարրեր կամ անփոփոխ թողնել բնօրինակ նկարը:

5. Համատեղ խզբզոց-նկարչություն, որի ժամանակ մի մեծ ստվարաթղթի վրա արդեն աշխատում են ընտանիքի բոլոր անդամները՝ իրար հետ միասին ստեղծելով խզբզանք և դրանց միջից դուրս բերելով նկարներ: Տվյալ առաջադրանքը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են ընտանիքի անդամները համագործակցում միմյանց հետ, թե որքանով են նրանք կարողանում աշխատել սերտ կապի մեջ մեկ թղթի վրա, ինչպես են դրսևորում իրենց անհատականությունը, արտահայտում իրենց անձնական սահմանները: Առաջադրանքը կատարելուց հետո արտթերապևտը սկսում է համեմատել յուրաքանչյուրի անհատական «խզբզոցը» խմբային աշխատանքում արվածի հետ:

6. Այս փուլում ևս ընտանիքի անդամներին առաջարկվում է ազատ նկարչություն: Փուլերի ընթացքում նրանք արդեն ունեն դիրքորոշում, որի հիման վրա ենթագիտակցորեն ընտրում են թեմատիկա և նկարում: Այս տեխնոլոգիայի ամենաբարդ փուլն է վերջին ազատ նկարը, որը բացահայտում է ընտանիքի անդամների սթրեսակայունության աստիճանը, փոփոխություններին, ազդեցություններին դիմակայելու ունակությունը:

Ընտանիքի հետ աշխատելու մի այլ տեխնոլոգիա է առաջարկում Ջուդիթ Ռուբինը: Նա խորհուրդ է տալիս ընտանիքի անդամներին տալ տարբեր առաջադրանքներ՝ կապված նկարչական գործունեության հետ՝ ինչպես անհատական, այնպես էլ համատեղ աշխատելու համար: Նա ևս կարևոր է համարել «խզբզոցի» տեխնիկան՝ նկատելով, որ խզբզոցը մարդու միջից դուրս է բերում լարվածությունը, նպաստում, որ նա «խոսի» իր մասին գծեր քաշելու, դրանք կարգավորելու կամ անկանոն թողնելու միջոցով: Ջ. Ռուբինն օգտագործել է «Ընտանեկան դիմանկար» տեխնիկայի տարբեր, այդ թվում՝ իրատեսական և խորհրդանշական դիմանկարների վարկածներ:

Հետաքրքրական է նաև նրա «Ընտանեկան որմնանկար» տեխնոլոգիան: Դրա համար սպիտակ մեծ պաստառ է ամրացվում պատին, և ընտանիքի անդամները միասին նկարում են որևէ թեմա իրենց ընտրությամբ: Առաջին հերթին նրանք պետք է միասին նկարելու ցանկություն ունենան, համաձայնության գան: Այս արտտեխնոլոգիան օգնում է ուսումնասիրել, ապա նաև ախտորոշել ընտանիքի միջև միջանձնային հարաբերությունների ձևավորման

տեխնիկան, դրանց խոչընդոտող պատճառները և դրանց վերացման ընթացքը, հաղորդակցման արդյունավետությունը բարձրացնելու պայմանները: Ընտանեկան հարաբերությունների ախտորոշումից բացի՝ նշված տեխնոլոգիան հաճախ նպաստում է ընտանիքի անդամների միջև առավել սերտ համագործակցությանը և արդյունավետ հաղորդակցության հաստատմանը:

Ընտանիքի հետ տարվող սոցիալ-մանակավարժական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Հելեն Լանդգարտեն առաջարկում էր բանավոր և ոչ բանավոր խոսքերի կիրառմամբ ընտանեկան առաջադրանքների տեխնոլոգիան: Հ. Լանդգարտենի ձեռքբերումներից մեկն առանձնահատուկ ախտորոշիչ ընթացակարգի մշակումն է, որն արտաքուստ հիշեցնում է խաղ, սակայն ինքնին բարդ արտտեխնոլոգիա է, որն ապահովում է ընտանիքի անդամների փոխհարաբերությունների և վարքագծերի համապարփակ գնահատումը: Այս տեխնոլոգիայի կիրառումը պահանջում է այնպիսի միջոցների առկայություն, ինչպիսիք են՝ ֆլոմաստերները, սպիտակ և գունավոր թղթերը, սոսինձը և այլ պարագաներ: Բանավոր և ոչ բանավոր խոսքերի կիրառմամբ ընտանեկան առաջադրանքների տեխնոլոգիան ենթադրում է ընտանիքի անդամների կողմից հետևյալ երեք առաջադրանքների կատարումը.

1. համատեղ պատկերային աշխատանքի ստեղծում՝ բանավոր շփման բացակայությամբ:

Սկզբում ընտանիքի անդամները (4 և ավելի անդամների դեպքում) պետք է կազմեն երկու ենթախումբ, իսկ հետո նրանցից յուրաքանչյուրը պետք է նկարի իր զույգի հետ մեկ առանձին թղթի վրա: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է ընտրի որոշակի գույնի կավիճ, յուղամատիտ կամ գրիչ, որը պետք է օգտագործի ամբողջ աշխատանքի ընթացքում: Այս գույնից ոչ ոք այլևս չի կարող օգտվել: Համատեղ աշխատանքի ընթացքում ընտանիքի անդամները չեն կարող խոսել, բայց կարող են շփվել ժեստերի և նշանների միջոցով: Երբ ենթախմբերը զգում են, որ նկարը ստեղծվել է, նրանք պետք է ազդանշան տան: Այնուհետև նրանք անցնում են բանավոր խոսքին. պետք է սկսեն իրենց նկարների ներկայացման և տպավորությունների փոխանակման փուլը: Մինչ այդ յուրաքանչյուր ենթախումբ պետք է վերնագրած լինի աշխատանքը:

2. Երկրորդ փուլում ամբողջ ընտանիքով պետք է ստեղծեն համատեղ պատկերային աշխատանք՝ առանց միմյանց հետ բանավոր կամ գրավոր հաղորդակցման:

Այս առաջադրանքը նման է նախորդին, բայց տարբերվում է նրանից, որ համատեղ նկարը ստեղծվում է ընտանիքի բոլոր անդամների կողմից մեկ թղթի

վրա: Երբ նկարն ավարտուն տեսք է ստանում, ընտանիքի անդամներն անցնում են նրա քննարկմանն ու նկարի համար անուն ընտրում:

Այս ախտորոշիչ աշխատանքը թույլ է տալիս բացահայտել և գնահատել ընտանեկան դիրքորոշումները միմյանց հանդեպ [2, 276-292]:

Հ. Լանդգարտենն առանձնացրել է մի քանի նշան, որոնցով գնահատվում է ընտանեկան փոխգործակցությունը.

1. Ո՞վ է առաջինը սկսել նկարել, ինչն է նախորդել դրան:

2. Ի՞նչ հերթագայությամբ են աշխատել ընտանիքի մյուս անդամները:

3. Ո՞ւմ գաղափարներն էին աջակցություն գտնում, իսկ ումը՝ ոչ:

4. Ինչպիսի՞ն էր ընտանիքի տարբեր անդամների ներգրավվածությունն աշխատանքի մեջ:

5. Ո՞վ է աշխատել ընդհանուր գծանկարի սահմանափակ տարածքում, այսինքն՝ հիմնականում իր տարածքում, և ո՞վ է ներխուժել ուրիշի տարածք, նկարել ամբողջ տարածքում:

6. Ո՞վ է փորձել «դուրս մղել» ուրիշներին, օրինակ՝ նկարելով նրա նկարների վերևում:

7. Ո՞վ էր ձգտել օգնել ուրիշներին, համագործակցության և փոխգործակցության հաստատման նախաձեռնություն ցուցաբերել:

8. Ո՞վ է խուսափել շփումներից և մեկուսի աշխատել:

9. Արդյո՞ք ընտանիքի անդամներն աշխատել են հերթով, կամ արդյո՞ք միաժամանակ նրանք ստեղծել են ենթախմբեր:

10. Եթե աշխատանքի ընթացքում պատկերի ընդհանուր բնույթի փոփոխություններ են եղել, ապա ո՞ւմ նախաձեռնությունների հետ է դա կապված եղել:

11. Ի՞նչ դիրքում են ընտանիքի տարբեր անդամների կողմից ստեղծված պատկերները (կենտրոնում, անկյուններում, ամբողջ տարածքում և այլն):

11. Ի՞նչ մակերես են զբաղեցնում ընտանիքի տարբեր անդամների ստեղծած պատկերները:

12. Ո՞րն է ընտանիքի տարբեր անդամների կողմից ստեղծված պատկերների խորհրդանշական «ծանրության կենտրոնը»:

13. Ո՞վ էր անկախություն ցուցաբերում, և ո՞վ էր կախված մյուսներից:

14. Ո՞վ էր նախաձեռնողական, և ո՞վ էր հետևում ուրիշների նախաձեռնությանը:

15. Արդյո՞ք կոնֆլիկտներ ծագեցին աշխատանքի ընթացքում, և ինչպե՞ս են դրանք լուծվել:

16. Ի՞նչ զգացողություններ են դրսևորվել ընտանիքի տարբեր անդամների մոտ աշխատանքի ընթացքում:

17. Արդյո՞ք ընտանիքի անդամների փոխազդեցությունն աշխատանքի ընթացքում քաոսային կամ կազմակերպված բնույթ էր կրում:

18. Որքանո՞վ էր անհատականություն դրսևորում ընտանիքի յուրաքանչյուր անդամն աշխատելիս:

Այսպես՝ ընտանեկան արտթերապևտիկ տեխնոլոգիաները կարող են զարգացնել՝

- համագործակցության ձգտում,
- ուրիշի դիրքորոշման հանդեպ հարգանք,
- լիդերության դրսևորումների չափավորություն,
- բարդ իրավիճակների հաղթահարման արդյունավետ ռազմավարությունների համատեղ մշակում և օգտագործում,
- հումորի զգացում,
- ուշադրություն միմյանց հանդեպ,
- կարեկցանքի, ապրումակցման դրսևորում:

Եզրակացություն: Դիտարկելով սոցիալական մանկավարժի կողմից սոցիալ-մանկավարժական աշխատանքների իրականացման բարդությունը՝ կարելի է ընտանեկան արտթերապիայի տեխնոլոգիաներն օգտագործել որպես ընտանեկան խնդրի ախտորոշման միջոց: Ընտանեկան արտթերապիայի տեխնոլոգաները կարող են առավել ազատ ու ստեղծագործ բնույթ հաղորդել սոցիալական մանկավարժի հետազոտությանը՝ խնդիրների վերհանման տեսանկյունից, նպաստել մասնագիտական առավել կրեատիվ որոշումներ կայացնելուն: Հոդվածում քննարկված ընտանեկան արտթերապևտիկ տեխնոլոգիաները կարելի է օգտագործել նաև ընտանեկան խորհրդատվություն կազմակերպելիս:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն., Ղազարյան Ա., Ղուկասյան Լ., Սոցիալական մանկավարժություն, ԵՊՀ հրատ., 2017, 334 էջ:

2. Ландгартен Х., Семейная арт-психотерапия // Игровая семейная психотерапия / Под ред. Ч. Шеффера и Л. Кери., СПб: Питер, 2001, 267с.

3. Медведева Е.А., Артпедагогика и арттерапия в специальном и инклюзивном образовании, Москва, Юрайт, 2019, 270 с.

4. Мамайчук И.И., Психокорекционные технологии для детей с проблемами в развитии, Москва, Юрайт, 2019, 319 с.

5. Пролкс Л., Групповая арт_терапия с маленькими детьми и их родителями // Арттерапия- новые горизонты / Под ред. А.И. Копытина, М.: Когито-Центр, 2006, 204 с.

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СЕМЕЙНЫХ АРТ-ТЕРАПЕВТИЧЕСКИХ ТЕХНОЛОГИЙ В РАБОТЕ СОЦИАЛЬНОГО ПЕДАГОГА

Айрапетян Лусине
Ереванский государственный университет, Армения

Аннотация

В работе с семьёй, параллельно со специальными технологиями, применение социальным педагогом арт-терапии позволяет ему организовать диагностические, а затем и коррекционные процессы. Они помогают диагностировать причину существующей проблемы, а также давать им соответствующие решения. Важность многообразия работ с семьёй, с точки зрения решения существующей в семье социально-психологической, психолого-педагогической проблемы, продуктивна, если социальный педагог к конструктивным процессам привлекает не только ребёнка, но и членов его семьи, в результате чего каждый из них сможет придоставить проблеме ценные перефразировки, показать положительное её решение и осознать, что за каждую возникшую в семье проблему несёт ответственность каждый член семьи.

Научные труды по всестороннему исследованию семейных арт-терапевтических технологий имеют выдающиеся американские арт-терапевты Ханна Квятковска, Джудит Рубин, Хелен Ландгартен, которые на основе опыта своих практических исследований разработали ценные технологии для тех, кто занимается прикладной педагогикой и психологией.

В статье проанализированы и представлены технологии, разработанные несколькими современными арт-терапевтами, а также тенденции арт-терапии с точки зрения эффективности применения семейных арт-технологий.

В статье впервые рассматривается использование в работе социального педагога технологий семейной арт-терапии как альтернативный подход к принятию продуктивных решений и формированию стиля работы. При использовании социальным педагогом технологий семейной арт-терапии, последние, в свою очередь, могут помочь ему в принятии продуктивных решений. Они могут придать более свободный и творческий характер исследованию и диагностике социального педагога, а также выявлению им проблем. Рассмотренные в статье приёмы арт-терапевтических технологий можно использовать также при организации семейной консультации.

Список использованной литературы

1. Арутюнян Н., Казарян А., Гукасян Л., Социальная педагогика, изд. ЕГУ, 334 с.

2. Ландгартен Х., Семейная арт-психотерапия // Игровая семейная психотерапия / Под ред. Ч. Шеффера и Л. Кери., СПб.: Питер, 2001, 267 с.

3. Медведева Е.А., Артпедагогика и арттерапи в специальном и инклюзивном образовании, Москва, Юрайт, 2019, 270 с.

4. Мамайчук И.И., Психокорекционные технологии для детей с проблемами в развитии, Москва, Юрайт, 2019, 319 с.

5. Пролкс Л., Групповая арт_терапия с маленькими детьми и их родителями // Арттерапия- новые горизонты / Под ред. А.И. Копытина. М.: Когито-Центр, 2006, 204 с.

FEATURES OF APPLICATION OF ART THERAPEUTIC FAMILY TECHNOLOGIES IN THE SOCIAL PEDAGOGUE'S WORK

Lusine Hayrapetyan
Yerevan State University, Armenia

Summary

Parallel with the social pedagogue's professional technologies used in the work with family, implementing provided opportunities of art therapy allows to manage the processes of diagnostics and then curing. They help diagnose the cause of the problem and provide appropriate solutions. The importance of the versatility of work with the family is effective from the aspect of solving the social-psychological, psycho-pedagogical problem in the family, if the social educator is able to not only engage the child but also his/her family members in constructive processes, which will enable each of them to form a value-based transformation of the problem, to appear in the positive side of the solution and realize that each family member is responsible for any problems that arise in the family. Outstanding American art therapists Hanna Kvyatkowska, Judith Rubin, Helen Landgarten, who have developed valuable technology based on their practical research experience for those who practice applied pedagogy or psychology, have works referring to comprehensive researches of family art therapeutic technologies. The article analyzes and presents technologies developed by several modern art therapists, as well as tendencies of art therapy from the aspect of effectiveness of application of family art-technologies. For the first time in this article, family art-technologies are considered as alternatives to making the efficient decisions in the work of a social pedagogue and in the development of a working style. When used by a social pedagogue, family art-technologies can help make effective decisions. They can transmit freer and more creative tone in social pedagogue's research, diagnosis, problem solving. The tricks of the art-therapeutic technologies discussed in this article can also be used in organizing family counseling.

References:

1. Harutyunyan N., Kazaryan A., Gukasyan L., Social pedagogy, YSU ed., 334 p.
2. Landgarten H., Family art psychotherapy // Game family psychotherapy / ed. CH. Schaeffer and L. Carey., St.Petersburg: Peter, 2001. – 267 p.
3. Medvedeva E. A., Artpedagogics and art therapy in special and inclusive education, Moscow, yurayt, 2019. – 270 p.
4. Mamaychuk I. I., Psychocorrectional technologies for children with developmental problems, Moscow, yurayt, 2019. – 319 p.
5. The L. Proulx, Group artterapii with young children and their parents // Artterapii - new horizons / ed. by A. I. Kopytina. – Moscow: Cogito Center, 2006. – 204 p.

Материал был представлен и отправлен на рецензию: 30.09.2019
Принято к публикации: 06.10.2019
Рецензент: канд. пед. наук, доцент Арменуи Ашикян

The material was submitted and sent to review: 30.09.2019
Was accepted for publication: 06.10.2019
Reviewer: Assoc. Prof., Ph.D. Armenuhi Ashikyan